

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ—ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՅԵՐԷՆ ԶԵՌԱԳՐԱՑ ՏՈՒՑԱԿԻ

Ա. ԳՐԱԿԸ.

Գ. Ե. Լալայեանի սոյն մեծածաւալ գործը իրա ժամանակին մեծ գովեստով ողջունուեց հայ մամուլից: Այդ գովեստն, ըստ իս, հիմնաւոր է միայն այն տեսակէտից, որ, շնորհիւ պ. Լալայեանի, այսօր որոշ չափով տեղեկութիւն ունինք 2000-ի շափ ձեռագրերի մասին, որոնց մեծ մասը, վերջին պատերազմական անցքերից ի վեր մի անգամ ընդ միշտ կորած է մեզ համար: Յօդուածագիրների դրուատիքներն արդարացնել կարելի է նաեւ այն պարզ պատճառով, որ նախ՝ մասնադիտական չէ իրանց վերաբերմունքը գէպի հրատարակուած գործը, երկրորդ՝ աշխատութեան բուն արժէքը որոշելու համար հնարաւորութիւն չունէին դիմելու, համեմատութեան համար, բուն իսկ ձեռագրերին, որոնք գտնուած էին Վասպուրականում: Այժմ սակայն, երբ նկարագրուած ձեռագրերի մի կարեւոր մասը գտնուած է Մ. Աթոռի մատենադարանում, չենք կարող քննադատօրէն չմօտենալ գործին՝ խոստովանելով հանդերձ աշխատութեան ստուար ծաւալի հետ նաեւ հեղինակի կամ, լաւ եւ, կազմողի գործ դրած եռանդն ու աշխատանքը:

Ամենից առաջ աչքի է ընկնում մի յառաջարանի բացակայութիւնը բուն իսկ հեղինակի կողմից, այնինչ մի այնպիսի գիտական լուրջ գործ, ինչպիսին է Զեռագրերի Յուշակը, արժան էր, այն եւ ընդարձակօրէն, ներկայացուելու նոյնինքն հեղինակի կողմից: Ինչքան էլ քիչ հետաքրքրութիւն մեզնում առաւելի չոր ու ցամաք գործերով, մասնագէտի ուշադրութիւնից չի կարող վրիպել, որ Յուշակ, յիշատակարանների ժողովածու եւ այլ այնպիսի գործեր լոյս ընծայելու համար անհրաժեշտ է ունենալ և՛ համապատասխան պատրաստութիւն և՛ բարեխիղճ, լուրջ վերաբերմունք: Այո, մի հասարակ յիշատակարանի սոսկ ընդօրինակութեան համար էլ որոշ աստիճանի պատրաստութիւնն անհրաժեշտ

է, այլապէս, ինչպէս ներկայ Յուցակի առթիւ, «Տի՛նա յառուեսս բանի՞ն ընդօրինակողը կարող է միամտօրէն կարգալ Վի՛նա առուեսս բանի՞ն և Թի՛ֆլիզում նստած սրբազրիչն էլ կարող է ուղղել Վի՛նաառուեսս բանի՞ն»։ Կամ «տուտս կենօք» (=տուայս կենօք) դարձուածքի մէջ կարող է, դարձեալ միամտօրէն, առաջին բառը կարգալ տուտս, որ սրբազրիչի ենթադրութեամբ ուղղուելու է յուտաս։ Իսկ բարեխղճութեան անհրաժեշտութիւնն ինքնին հասկանալի է, երբ մտածենք, որ թէ ներկայ թէ ապագայ ժամանակներում, հայ թէ օտար, հարիւրաւոր գլուխներ հաւատք են ընծայելու հրատարակուած գործի հշմարտութեանը, նրա վրայ հիմնուած գրքեր են գրելու, եզրակացութիւններ են հանելու, գիտութիւն են մշակելու, են, են։

Ինչպէս ասացինք, պ. Լալայեանի նկարագրած ձեռագրերի մի մասն արդէն փոխադրուած է Մ. Աթոռ, այնպէս որ կարելի է, համեմատութեամբ, նոյն ինքն փաստերին տալ խօսքը։ Բանանք, օրինակի համար, ըստ պատահման, 2. 85.—Նկարագրութեան մէջ յիշուած է, որ ձեռագրի մէջ, մազադաթեայ պահպանակներից զատ, կայ 4 թերթից բաղկացած, բոլորագիր, մի հառ Վեպաղակո (ոչ յաղագո) Զգուշութեւ եւ երկիւղիւ պահել (ոչ պահելայ) գկիրակէն (ոչ գկիւրակէն)։ Ապասելի էր, որ թէն ոչ մեծածաւալ բայց մի ամբողջական շարագրութեան հեղինակը կամ գրիչն ու գրել տուողն եւ կը յիշատակուէին, երբ այդ անհնար չէր—«Բ՞ա տ՞ժ յորժամ զատ միւսանգամ ի դաստասան, եւ պսակես զա՞մ ա՞բս, բնդ նոսին յուսաւորեա եւ դասաւորեա գթումա պատուական Բ՞նայն որ զսակաւ հառս գրել ես, եւ զատմ Բ՞նայն, եւ զա՞մ արեան մեծաւորոն իւրեանց։ Ընդ նոսին եւ զմեզապարս գրիչս զսեփանոս օուսանուն Բ՞նանա, որ զսակաւ հառս գրեցի...»։

Հէնց այն ձեռագրի յիշատակարանն ընդօրինակուած է բազմաթիւ ուղղագրական փոփոխութիւններով, որոնք, մանաւանդ լեզուական տեսակէտից, ուսումնասիրողին չեն կարող չմոլորեցնել, որ, կենակցուն փոխ, կենակցուն—«խորհրդեամբ ա՞ծասէր կենակցան իւրոյն»։ Դեւորգիա փոխ, գեորգեա, քերեռնուք փոխ, քերեռնոյք, օխարանաց փոխ, սղալանաց, են, են։

Պ. Լալայեանի Յուցակից այնպէս է երևում, որպէս թէ ընդօրինակուած սոյն յիշատակարանը մի միակ գրչի արտագրութիւն է և միևնոյն ժամանակ գրած, այնինչ տարրեր գրիչներ են և հաւանօրէն ժամանակով էլ այնքան հեռու իրարից որքան մեծ է գրերի զանադանութիւնը։ Իսկ եթէ կարելի էր գրերի տարրերութեան ուշ չդարձնել, ինչո՞ւ այդ դէպքում կարեւորութիւն չընծայել և դուրս ձգել այն երկու ահագին սխնականքը, որոնք ձեռագրում գոյութիւն ունին, իսկ Յուցակում բացակայում են։

Յուշակում կարդում ենք ընդօրինակուած յիշատակարանի վերջում փակագծի մէջ «թափուած է», մինչդեռ իսկականում, միևնույն գրով, շարունակում է դեռ 13 տող եւս:

Վերցնենք, դարձեալ ըստ սլատահման, մի այլ ձեռագիր— թ. 152, Յուշակի կազմողն ինքն եւ յիշատակում է, որ Ձեռագրիս թերթերն սկսել են (խոնարութիւնից) իրար կպչել: Եւ սակայն ինչպէս է կարողացել թերթերն համարել և բարեխղճօրէն դննած, ուսումնասիրած յայտարարել իրան, երբ մինչև օրս էլ այդ թերթերը մնում են իրար կպած:— Ձեռագրիս սկզբում և վերջում գտնուած երկերկու թերթ մազադաթներն, ըստ Յուշակի, վերցրած են մի «երկաթագիր աւետարան»ից, մինչդեռ, ինձ անձանօթ, մի մեկնարանական գրուածքի մասն են կազմում: Այստեղ պարտք ենք համարում յայտնել, որ Ս. Գրոց Համաբարբառից յետոյ դիմեցինք Հայկազեան մեծ բառգրքի օգնութեան՝ իմանալու սոյն չորս թերթ մազադաթի ինչ գրքից վերցրած լինելը: Բառգրքում չգտանք մեր որոնած աղերսները սոյն թերթերում գործ ածուած բառերի շուրջը: Այս հանգամանքն առիթ է տալիս կարծուածից աւելի գնահատելու յիշեալ պահպանակների արժէքը:

Այսպիսի և դեռ նոյն իսկ աւելի ծանր գիտողութիւններ կարելի է անել Յուշակում նկարագրուած ամեն մի ձեռագրի առթիւ:

Առ հասարակ Յուշակի ընթերցումն այն տպաւորութիւնն է թողնում, որ սա պ. Լալայեանի իրա անմիջական աշխատութեան արդիւնքը չէ, այլ զանազան երկրորդական վարձկան ձեռքերի գործ, որ յետոյ պ. Լալայեանի կողմից հապնեպով խմբագրուել է ի մի: Գուցէ հանգամանքները չեն ներած այլ կերպ վարուել, սակայն այդ դէպքում պէտք էր նախ՝ գործն յանձնել կարող և բարեխղճ մարդկանց և երկրորդ՝ այդ հանգամանքներն յիշատակել Յուշակի յառաջարանում, որպէսզի ապագայ օգտուողն աչքի առաջ ունենար իր վստահութեան և գնահատանքի շափը ճշտելու համար: Իսկ մեր անհատական կարծիքով գիտական գործի արժէքն ինքնին կընկնի, երբ հեղինակն ինքը անձամբ չի կատարում:

Բայց դուցէ սխալում ենք կարծելով, որ պ. Լալայեանի Յուշակը գիտական նպատակով է կազմուած՝ հակառակ Ազգադրական Ընկերութեան Խորհրդի յայտարարութեան, թէ այս գործը «մատենագրական», «լեզուաբանական, պատմական, հնագիտական, ազգագրական և գեղարուեստական մեծ նշանակութիւն ունի»: Այդ բոլորն անիրական խօսքեր են մնում, երբ Յուշակի ամեն մի էջում տասնեակներով սխալներ ու անճշտութիւններ են ցուցադրուած՝ առանց հնարաւորութիւն տրուած լինելու ուղիղջ վերականգնելու: Գ. Լալայեանի Յուշակն այնքան անխնամ է, որ

յատուկ անունների մի ցանկ անդամ չունի:

Մի նկատողութիւն էլ գործի գեղարուեստական կողմի մասին: Յառաջարկումս յիշուած է, որ «Ձեռագրաց Յուշակը» դարգարուած է լինելու նկարագրուած ձեռագրերի մանրանկարների և տառերի դունաւոր և միապոյն օրինակներով և կազմերի նկարներով: Մի կողմ թողնելով մի շարք ոչ հայկական և մի շարք էլ սրբագրուած հայկական ոճի դարգանկարները, որոնք ցիրուցան, բոլորովին անտեղի կերպով, տեղ են դրած Յուշակում, այդտեղ, այդ դարգանկարների վերաբաղըութեան մէջ իսկ հանդէս է բերուած կազմողի եթէ ոչ անհմտութիւնը այս հարցում գէթ անուշադրութիւնը: Ահա մի շատ ցայտուն օրինակ այս առթիւ: Էջ 87-ում դրուած է մի լուսանցազարդ, որ, ըստ յայտարարութեան Ազգ. Ընկ. Խորհրդի, պէտք է վերցրած լինէր նկարագրուած ձեռագրերից, այն ինչ փոխ է առնուած Մայր Աթոռի սեփականութիւն չեթում Բ.-ի Ճաշոցից. հմ. Նոդակար, Գիրք Ա. յօդ. Գար. վ. տախտ. ԿԹ. բայց ինչ որ Նոդակաթի յօդուածագիրը ներկայացրել է իբրեւ 1288 թուի գործ, պ. Լալայեանի Յուշակում ցուցադրուած է իբրեւ ԺԲ. դ.-ից մի նմոյշ:

Գործիս երկրորդ պրակը գեռ լոյս չի տեսած: Յանկանում ենք, որ սոյն առաջին պրակի թերութիւնները, որոնք արդիւնք են պարզապէս մեթոդի սխալ ըմբռնման, գէթ այնտեղ չկրկնուին: Այլապէս անօգուտ պիտի անցնի գիտութեան համար:

Մետոյ վարդապետ Մախուդեանց